ՆՈՒԱԳ

ԱՌ ՂԵՒՈՆԴԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ի ՅԻՇԱՏԱԿԻ ԱՆՈՒԱՆՆ

Ո՞ւմ ծլխիք դուք այգունն այսօր, սուրբ ցօղէջք,
Ո՞ւմ շընչէք դուք, գարնանայինքըդ զեփիւռք.
Գոռոզ արծուի, ոսկեշիկնեալ թիկնամէջք.
Յո՞ր կոյս սլանան վարազաթեւքդ լայնասփիւռք։

– Ի յեւս, Հայոցն ի դաշտ սուրամք ու ի Մասիք
Երկնահանդէս ուր հայրենիքդ խըմբէ պար։
– Ի Հայաստա՜ն. ո՜ անձկալի հայրենիք.
Օ՜ն անդր ընդ փոյթ, առէք ընդ ձեզ և զաշխարհ։

Ա՜հ ոչ, շատ է ընդ ձեզ միայն թէ տարջիք
Զեփիւռք, ըզսիրտս օդախաղաց բերելով,
Արծուիդ, և դու ըզմիտս ի թեւսդ. կորովիք։…
[ընդ իս
Բայց ո՞ւր անկան բանքս, ո՜հ, ներեա Հայր դու
Հօրդ ընդ Մասեաց թէ խառնեցի զյիշատակ.
Զի Հայ և Հայր մի արձազանգ տան սըրտիս։

Բարիզ, 1 Մարտ 1859 Ն. Ծ. Որդի և Աշակերտ Ձեր

ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼՆ ԻՄ ՀԱՅՐ (Ղ. ԱԼԻՇԱՆ)

Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՈՒԱՆՆ

ՆՈՒԱԳ ՍԻՐՈՅՆ ԱՐԾԱՐԾԱՆԱՑ

Հէ՜գ մանկութիւն, որ գուցէ խուն ինչ սըրտեակ
Խուն ինչ ի նմա սիրոյ փայլուն և կայծակն.
Այլ ո՜հ, ո՞ւմ ցայտիցի այդ վեր ի վայր
Եթէ չիցէ իւր առ անձուկն հայր կամ մայր։

Ողո՜րմ թըռչնեակ, որ պակասէ վարդին թուփ,
Ողո՜րմ վըտակ, որ կանաչ չեն ծաղկոց թումբ,
Ողո՜րմ յասմիկ, որ յեց վարդիկն չիցէ հուպ.
Հէ՜գ և մանկիկդ, որ մայրենին չիցէ ծոց։

Այլ որ լըճին եա ըզլերանցըն պատուարս,
Որ եղջերուաց ապաւէն եա զառապարս,
Զի զօդայնոց քամահիցեն զոռ զամպրոպս.

Նոյն և ասաց. Ոչ, ոչ թողից ըզձեզ որբս.
Եւ առ յերկնից տեսաք ըզՀայրդ ակներեւ։ –
Հայր արդ սըրտիկս զօվասցի Քեւ իբր յանձրեւ։

Բարիզ, 1 Մարտ 1859 Որդի Ձեր Երախտապարտ

* * *

ԵՐԳ Ի ՀԱՅ ԱՄԱՆՈՐ

Ի յիշատակ տօնախմբութեան առաջնոյ աւուր Ամսուանն Զարթին

(Եղանակեաց Տիգրան Չուհաճեան)

Դարերու մէջէն
Գըլուխ համբարձած՝
Զայնէ զուարթադէմ
Ժամանակն հինցած.

Նորոգ պարծանաց
Ազգին Հայկազանց
Բերեմ ընծայ նոր
Զարթին Ամանոր։

Կ. Պոլիս 1871

Զարթնո՛ւն թող Հայեր
Ի կեանս եւ ի սէր,
Զարթնո՛ւն թող սրտեր
Ի լոյս ցնծաբեր։

Նոր մարմին առնունք,
Նոր զարդ զգենունք,
Բայց ամբողջ մընայ
Սիրտ ի մեզ Հայկայ։

ԳԷՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՀ

ՀՐԱՒԷՐ Ի ԴԱՇՏ ՄԻՈՒԹԵԱՆ

Երգեալ ի Կ. Պոլիս ի 1863 ի հանդէս տարեդարձի հաստատութեան Ազգային Սահմանադրութեան

Ե՛լ Հայոց Մուսայդ Մասեաց վիհերէն
Ոսկեթել թեւերդ հագիր դու անդէն.
Հաշտութեան փողովդ ըզՀայս ի Պոսփոր
Ի միութեան դաշտ հրաւիրեա՛ բոլոր.

Օ՜ն Հայկայ Սերունդք,
Խոհեմ Արիծունք.
Վազենք սըրտիւ հաշտ
Ի Միութեան դաշտ.
Անկցի՜ անմիաբանն,
Կեցցէ՜ միաբանն
Եւ Հայոց անուն
Բարձրասցի անհուն։

Անմահասցին Հայք. Սէրն է թագաւոր.
Կանգնեսցին պըօշք. յաղթեաց Սէրն հըզօր.
Շանթս որոտայցեն թո՛ղ թըշնամիք մեր.
Չիք ինչ յաշխարհիս յաղթող քան ըզ Սէր։ Օ՜ն եւն։

Չիցեն Հայոց մէջ ըզգայուն սըրտեր
Անվըկանդ բազուկ, երկաթեա՛յ կուրծքեր,
Արծուաթռիչ հանճար, և միտք վառվըռուն
Մե՛ր են ըստացուածք, որդիք եռանդուն։ Օ՜ն եւն։

Անմխիթա՛ր Հայոց գարունն է հասեր.
Ցերջանկութեանըն դաշտ փունջեր են ծաղկեր.
Ի բա՜ց հառաչանք, ի բա՜ց տխուր աշուն.
Ըզմերըն երգէ զսէր Սոխակ սիրուն։ Օ՜ն եւն։

Ձեռք ձեռքի տըւած խընդութեան պարով
«Կեցցէ՜ միութիւն» գոչենք մի բերնով.
Նոր կեանք, նոր դարեր մեզ հրաւէր կարդան,
Եւ բոլոր աշխարհք ընդ Հայս զարմանան։ Օ՜ն եւն։

Գ. ԱՊՏՈՒԼԼԱՀԵԱՆ

Գերապատիւ Հայր Արսէն Վ. Բագրատունի

Վաղ իսկ ընկալեալ զԹուղթ Ձեր, արդ այժմ առնում պարապ տալ այնմ պատասխանի. զի սիրալի եւս կալայ ինձ սովորոյթ բերելոյ նախ ընթեռնուլ զնամակս Ձեր երկնաւոր և ցընծալից սրտիւ, և որոճալ ի մտի զխմաստն գրչին որ ծնաւ զՀայկ։ Բա՛րէ, ահա դարձեալ Հայկ, անմեկնելին ի յուշոյ մերմէ. և մինչ գրեմ առ Ձեզ անդէն սիրտ իմ և գրիչ վազեն ի Հայկ. իղձ, տարփումն, տենչ և քաղց մեր վասն Նորա անգթաբար աղեկիզեն զմեզ։ Երդմնեցուցանեմ զՁեզ յանուն ամենազօրելի և յոյժ արդարացի անհամբերութեան մերոյ, մի եւս դանդաղել՝ առաքել առ զՀայկ լուսեղէն պսակաւն. և կամ եկայք դուք ինքնին. չիք այսուհետեւ խտիր ընդ Ձեզ և ընդ Հայկ. երկոքեանդ իսկ վիճակեցայք յանմահութիւն։

Մինչդեռ ես զփանաքի քերթածս իմ տամ ի հուր, Պ. Սրապիոնն զիւրսն ետ ի լոյս. եթէ Բագրատունին Քերական և Հայկաբան բազում ուրեք խոժոռեցաւ յայնս, սակայն անշուշտ եմ զի Բագրատունին բանաստեղծ ախորժ հաճութեամբ ակնարկեաց ի նոսա։ Ակն ունիմ լսել ի մօտոյ և զառանձին կարծիս Ձեր։

Յաճախեմ սակս առ մտերիմն իմ Գարագաշեան յԱռնաւուտ Քէօյ. անդ երկու մելամաղձիկ գլուխք զուարթանան միշտ զՀայկէն խօսելով. չափեմք ի միասին զՀասակ Թորգոմեան հսկային, և գտեալ զայն առաւելեալ հազար կանգնաչափ, փառս տամք հրաշից գրչոյն սքանչելարուեստ Մուսին. որ անմոռաց յիշատակին յայց ելանեմք սրտիւ իբրու Ջերմեռանդն ուխտաւորք. անտի աչք մեր հառաչանօք ձգին ի բլուրս և ի պարտէզս Ուզզոյ ուստի փախեան Մուսայք, և անմխիթար մնացաք մեք ի խառնափնդոր քաղաքիս։

Ողջոյն անմոռաց սիրոյ և մեծարանաց յինէն և ի Գարագաշեանէ առ Ձեզ. ի Մերամէթճեան տոհմէն և ի Հիւրմիւզեանց. Մարեամ տուտու թուղթ մի ի վաղուց գրեալ առ Ձեզ, և դեռ ակն ունի պատասխանւոյ։

Զսիրալիր և զերախտապարտ ողջոյն իմ աղաչեմ մատուցանել Վ. Հ. Պետրոսի Մինասեան վարդապետին քրտնավաստակ և բազմարդիւն դաստիարակին իմոյ։

Գերապատիւ Հայրութեանդ
Խ. Ծ.
ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Պոլիս, 13 Հոկտ. 1857

digitised by A.R.A.R.@